



59. ԽՈՎՎՈՒ ԾՆԱԾ ԱԽԶԻԿ

Իրիկըմ ու կընիկըմ կեն: Կընգան տըղա չըր էղներ: Իրիկ խովիվ էր, հըմենն օր օխչար կը տաներ սար, խովվութեն կեներ:

Մըռտըբիւ կընիկ էկավ, մըտավ տուն:

Ասաց. - Կընի'կ, ի՞նչ պիտի տաս ծի, ես քյե տըղովցուցեմ:

Ասաց. - Ի՛նչ կուգես իմ խոգիւց, ես կը տամ:

Էտա մըռտըբիւ կընիկ էլավ, մեկ վիճակ մ' էպաց: Խացըմ գյըրեց, էտիր վըր քուռսուն, օր կընիկ ուտեր, տըղովներ:

Կընիկ գյընաց, ուր գյըլիխ կը լըվեր: Խովիվ սար օխչար կարծեր, սարեն էկավ տուն:

Ասաց. - Կընի'կ, ես անոթի եմ:

Ասաց. - Կանի', չուր ես իմ գյըլիխ լըվամ, չոլեն գամ:

Ասաց. - Չէ', ես էսա խաց տ'ուտեմ, էսա ի՞նչ խաց ա վըր քուռսուն:

Ասաց. - Մ'ո'ւտեր, չուր ես գամ:

Ասաց. - Վոլա', տ'ուտեմ:

Չուր կընիկ չոլեն էլավ, խովիվ կերավ, գյընաց, գյընաց սար, էնոր կըտրին խասավ: Դիրիս խովիվ տըղովցավ, ին ամիս թըմավ, ախչիկ մ' էպեր: Այնոր ճարիկ էրաց չոխչիկ, էնոր գանաակ էթալ հինե: Մեկ ճոչ քարի'մ մեչ էտիր: Պառվուն մեկ քոլ էժ կեր, սիրեցուց վըր էնոր ախչկեն: Կըտիր օր կը գյեր ցածր, պառավ բալեն կը տեր խովիվ:

Կասեր. - Տիւ հե՞ր իմ քոլ էժ կը կըթիս, այնոր կաթ կուտիս:

Կասա. - Մամի՛կ, խարա՛մ, թի ես քու քոլ է՛նու կաթ կը կըթիմ: Ես քու քոլ է՛նու կաթ չըմ կերի: Խարա՛մ, թի ես քու քոլ է՛նու կաթ կըթեր եմ ու կերեր եմ:

Ինչըխ կենա, չեցկեր մամկե խելք: Դիրիս մամիկ կելի, կեսգյիշերին էնոր խմոր կենա: Ժամ օր կը տըկա, ուր թունիր կը վանա: Աղոթոան օր կը ճողճողվի, էնոր խաց կը թըխա: Կելի, էնոր կըթոց կը շալկա, էնոր արճկան կը պըռնա ուր ձեռ, էնոր սուլերն էլ կը խագյի, դիրիս կընգի ճամբախ: Մեկ խորոտըմ արճկան ճողելեն կերթա:

Կերթա չուր գյետի պըռուկ, կը կանի: Էնտեղ կը լըվանցվի, կերթա, կելի բերտեղ, կը խի՝ խովիվ օխչար կը գըլխըվորա: Այնոր քոլ է՛ծ ընցեր կըտրի հանանճ, կը վանգա, կը գա:

Կը գա, մեկ ճոչ քարի տակ կը մըտի: Պառապ կը հիլըվրի, կերթա: Կերթա, կելնի էտա ճոչ քարի տակ: Կը խի, օր մեկ խորոտ ախչիկըմ գի չոխչիկ, այտա պառավու քոլ է՛ծ օտ վիրուցեր, ախչիկ ծիծ կու տա: Է՛ծ կը գըլրկա, կը տա ետ, կասա. «Մեռնիմ էն քոլ է՛նուն, ծի ախչիկ մ'ա պերեր»:

Խովիվ ներքուց կը կանչա, կասա. - Մամի՛կ, էտի իմ ախչիկն ա:

Կասա. - Չէ՛, քին չիր: Մեռնիմ իմ քոլ է՛նուն, ծի ախչիկ մ'ա պերեր:

Դիրիս խովիվ կը վանգա, կելի հելվեր, կելի չուր պառավու մոտ ու վ'ախչկեն:

Խովիվ օտքյեր կը պըռնա, էն կը քանչա, կասա. - Ի՛մն ա:

Էն կը քանչա, կասա. - Ի՛մն ա:

Սիրամախսավք վերուց կը գա, կը գանա, տանի երկըսվի ձեռնեն: Կը տանի Շամա բարդիւ ծեր կը տըլնա: Կերթա, պան կը պերա, ախչիկ կուտա, զախչիկ էտա տեղ կը տիրա:

Խըլխուռն կելին, չուր խրամենցին: Թանգավորի լաճ էնոր ծին ճրուռն կը տանի: Կը խի գի մեկ խորոտ սուրաթըմ:

Ձին կը խի, կը խըռտի, ինչըխ կենա, վըր ճրուռն չի յար:

Թանգավորի լաճ կորոնա, օր մեկ խորոտ սուրաթըմ գի մըլ ճրուռն: Դես կորոնա, դեն կորոնա, մարթ չըխիր:

Կորոնա Շամա բարդիւ ծեր, օր մեկ խորոտ ախչիկըմ գի էտա տեղ:

Ախշիկ գյըլիխ կը խանա էտա բարդի գհնջըվեր, կը մըտու-
ցա հիմնե: Կը խանա, կը մըտուցա:

Թանգավորի լաճն էլ մեկ քուլի՛մ օսկի կը լըցա էտա ծառի
տակ: Կերթա մեկ նանպան տեղ, կը մըտի, օր այտա ախշիկ ծառեն
էճի, գա՛, առի, էրթա էնոր:

Չուր հիրիկուն կը կանի, ինչըխ կենա, ախշիկ չէճիր տակ
ծառեն: Էնոր ձին էլ ծարավ կառի, գա՛ տուն:

Թանգավորի լաճ էնո խոր կասա. - Դանդի՛, էղի՛, չէղի՛, էսա
ծառի ծերի ախշիկ տը պերես ընծի:

Կասա. - Որտի՛, ի՞նչըխ էնեմ, ի՞նչըխ պերեմ տակ: Ծառ
կըտրիմ՝ կընգի մեռի: Ծառ չըկտրիմք՝ չըկանանք էլիր, պերիր:

Կասա. - Չէ՛, դանդի՛, բընենավե տը պերես: Չըպերես, չըմ
փսակվիր: Կը թոնիմ, էմալ երկիր կերթամ, օր թալջար քու ձեն իմ
ականջ չընգի:

Դիրիս մեկ պառավ մ՛ էկավ:

Ասաց. - Թանգավոր՛, ի՞նչ տաս ձի, էն ախշիկ պերեմ քու
լաճուն:

Ասաց. - Ինչ օր ուզես, կը տամ:

Ասաց. - Մեկ գառ տվե՛ք ձիկ, տանակ մ՛ էլ տվե՛ք, մեկ
պըղինձ մ՛ էլ տվե՛ք ձի, խեցիկ մ՛ էլ կըրակ, տարե՛ք, տրե՛ք ծառի
տակ:

Պառավ էլավ գըընաց, կըրակ էլից գյետին, պըղինձ կոռծեց
վերեն, փարչըմ ճուր էլից պըղընծի օռուն:

Ախշիկ վիրուց կանչեց, ասաց. - Մամի՛կ, ամտլա՛ մ՛է՛ներ:
Պըղինձ շիթկա՛, տի՛ր վըր կըրակին, փարչ ճուր լի՛ց հիմնե:

Ասաց. - Չէ՛, որտի՛, չըմ ըխիր: Ա՛յ իմ աչկեր կոր ա: Արի՛,
շինա՛ ու գըընա՛:

Ասաց. - Չէ՛, մամի՛կ, պըղինձ շիթկա՛ ու ճուր լի՛ց հիմնե:

Ասաց. - Չէ՛, որտի՛, չըմ ըխիր:

Մամիկ էլավ, գառ էտիր գյետին, տանկի քանակ քըսեց
գառու վըզին, գառ էնոր օտքիր մեկ սըհաթե՛մ կանդար թափ
էտուր:

Ասաց. - Մամի՛կ, տանակ շիթկա՛, գառու վըզին քըսա՛:

Ասաց. - Չէ՛, որտի՛, չըմ ըխիր: Արի՛, շինա՛ ու գըընա՛: Հանա
տանկի պերան շիթկա՛, տի՛ր գառու վըզին ու գըընա՛:

Մեկէլ էլ մամիկ տեսավ՝ ախշիկ վիրուց թըփթըփալեն էկավ:

Ասաց. - Մամիկ, շոտ էրա, իմ խեր չըգա խաբար տա: Իմ խեր Սիրամախավք ա, քյե կը ճըղա:

Դիրիս մամիկ էլավ, պաներ էթող, ախչիկ գյըրկեց, տարավ, թագավորի տախտի մեջ էտիր:

Թագավոր էլավ, դալալ էտուր կանչել, վոզիրներ էկան, փաշեք էկան, կընիկ ու իրիկ տարան փսակ: Յոթ գլխեր խարսնիս էրին: Այնոր ուռց կըտրեցին:

Մեկ կընիկ մ' էպեր թագավորի տըղեն, էտիր ուր կընգան հանձն խըղամ: Գյըլիխ կը լըվեր թագավորի խարսին:

Յոթ չոլ կեր թագավորին:

Ասաց. - Խըղամ, այնա վեց չոլ գյըլիխ լըվան իմ կընգան, այնա մեկ չոլ չըլըվան:

Խըղամ էմալ էրաց: Շատ-քիչ մընաց: Էն մեկ օր էտա խարսի գյըլիխ ըն մեկ չոլ լըվաց:

Ասաց. - Խի', էսա մեկ օր էսա խարսի գյըլիխ այսա չոլի մեջ լըվամ, ի՞նչ կեղի:

Էտա չոլի ծակվեր քաշեցին, էտա կընիկ կուրուսավ, խըղամն էլ էթող, հայ փախավ:

Խարս գյընաց, ճաղցի բուսվեր ասեցավ: Ծաղցըփան գյընաց, առավ, էկավ: Էպեր, էրաց ուր կազարած:

Դիրիս թագավորի տըղեն էլավ, դալալ էտուր կանչել: Ամեն մարթ տարավ, բանդըմ խաղ ասաց:

Մարթ չըմընաց, հըմեն էկան, էնոնց խաղեր ասին: Էլ մարթ չըմընաց:

Ասին. - Վո՞ն ա մընացեր:

Ասին. - Ծաղցըփան, ուր կընիկ, ուր կազարած:

Էլան ճաղցըփան, ուր կընիկ գացին: Գացին, բանդըմ ճաղցըփան ասաց: Բանդ մ' էլ ճաղցըփընի կընիկ ասաց:

Ասաց. - Ո՞ր մընաց:

Ասաց. - Մարթ չըմընացեր: Ծաղցըփընի կազարածն ա մընացեր:

Ասաց. - Շիվար, էնի ի՞նչ գլխտա էնպես պաներ:

Ասաց. - Գացե՛ք, պերե՛ք: Խեկք ճոչ ու պըստիկ չըկա:

Էկավ, մըստավ:

Ասաց. - Խովվու պերած եմ, քոլ էծու ծըծած եմ, քաչալ արծվու տարած եմ, բարդի ծեր տըրած եմ: Մամկե խապած եմ,

թագավորի լաճու կընիկ եմ, չոլի ծակվեր քաշած եմ, ճանղի բոստ
ասեցած եմ, ճանղըփընի կազարած եմ, թագավորի լաճու կընիկն
եմ:

Էլան, նորեն փսակվան: Յոթն օր, յոթն գլիշեր խարսնիս
երին, էնոնց ուռց կըտրեցին:

Կան էկավ, խըղանն էլ կընդավ, էպե թունիր մ' հըլին կըրակ
էրաց, այտա խըղան խորեց մեջ: Խըլիսուն էլավ, խըղանոջ
օսկըռներ էխան, սըղկեց, ա՛յ էտուր, քամին առավ, գլըմաց:

Էնոնք խասան ուրենց մըրագին, տհւն էլ՝ քհն:

